

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

PAGE

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — Երկու ափերու վրայ. 1

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ. — Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի (Շար. 5) 6

ԾԻՍԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԳԱՆ. — Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին (Շար. 31) 14

ՊԱՏՄԱԿԱՆ

ԳԵՆՐԳԵԱՆ ԳԱՌՆԻԿ. — Արղնի եւ Մատեն (նըշտումներ՝ պատմութեան համար) 18

ԳՐԱԿԱՆ

ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. — Հնդկահայ մշակոյթը եւ ժ. դարի մի անյայտ ձեռագիր տաղարան (Շար.) 24

ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Ահարոն Տատուրեան (1886-1965) Կենսագրական գիծեր — Նկարագրական գիծեր — Նկարագիրը — Գործերը — Գնահատական եւ գրական վերլուծում 34

ՏԱՏՈՒՐԵԱՆ ԱՀԱՐՈՆ. — Երեկոյ 62

ՏԱՏՈՒՐԵԱՆ ԱՀԱՐՈՆ. — Արցունքները 63

ԳՈՒՐԵԱՆ ԵՂԻՇԵ. — Նամակ առ Հ. Արսէն Ղազիկեան 64

ARTICLE DE FOND

HOVHANNESIAN P. VAHAN. — Sur les deux rives 1

PHILOLOGIE

ANANIAN P. PAUL. — La vie de S. Mesrop (Suite) 6

LITURGIE

HATZOUNI P. VARDAN. — Histoire du Bréviaire Arménien (Suite) 14

HISTOIRE

KEVORKIAN KARNIG. — Arghni et Maden (Etude pour l'histoire) 18

LITTERATURE

YEREMIAN ARAM. — La culture Indo-arménienne et un chansonnier manuscrit du XIX^e siècle (A suivre) 24

DJANACHIAN P. MESROP. — Aharon Dadorian (1886-1965). Notes biographiques - Son caractère - Les oeuvres - Etude critique et littéraire 34

DADOURIAN AHARON. — Le soir 62

DADOURIAN AHARON. — Les larmes 63

DOURIAN EGHICHE. — Lettre au Rév. P. Arsen Ghazighian 64

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

PRIX DE L'ABONNEMENT ANNUEL

Խառնիկ համար . . . 3500 Լիր
Արտասահմանի համար . . . 8 Տոլար
Մեկ թիւը՝ 250 լիր — 0,50 Տոլար

Pour l'Italie. . . 3500 Lires
Pour l'Etranger . . . 8 Dollars
Le Numéro: 250 Lires - 0,50 Dollars

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ «ԳԱՆՈՒՍ ԿԻՒՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ» ՆՊԱՍՏՈՎ

PUBLIE AVEC LE CONCOURS DE LA «FONDATION CALOUSTE GULBENKIAN»

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti — Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia



1843 - 1965
ՃԻԳ. ՏԱՐԻ

ԹԻԻ. 1 - 3
ՅՈՒՆՈՒՐ - ՄԱՐՏ

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXIII^e année, 1965, N. 1 - 3 Janvier - Mars

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԱՓԵՐՈՒ ՎՐԱՅ

Ոչ մէկ ժողովուրդ սրտի եւ մտքի այնքան ընդարձակ սահմաններ ունի՝ ինչպէս Հայութիւնը: Աստղերն երկնքի մէջ ցըրուած, մենք երկրի վրայ. անոնք կը պըլպըլան, մէկը միւսէն անջատ, բայց ցըլքերու զեղեցիկ միութիւն մը կազմելով. մենք մտքի ճրագներով կը պլպլանք աշխարհի երկու ափերուն վրայ, հոգեկան միութիւն կազմելով:

Ո՞վ մեզ իրարու կը շղթայէ, թերթէ՞ր, լրագիրնէ՞ր, թէ ցեղի մը անունն ու պատմութիւնը:

Աներեւոյթ ողի մը, անշուտիւրի եւ անըմբռնելի տեսլական մը, որ անթուական ժամանակ է եւ առօրեայ կեանք, որ կը հետեւի մեզի բոլորիս, որ չի ճանչնար սահման եւ անցազիր, որ կը պատէ մեզ տաք ճառագայթի մը պէս, եւ մեր հոգիին հետ հոգի կ'ըլլայ, արիւնին հետ՝ արիւն, սրտին հետ՝ քաղցր զգացում: Ի՞նչ անուն տամ այս մեր էութիւնը կազմող յաւիտենական ենթակային:

Դարեր դարերու յաջորդեցին, տարիներ տարիներու վրայ բարդուեցան. մենք

քաղցինք երկար եւ տաժանելի ճամբաներէ, ինկանք եւ կանգնեցանք, յաղթեցինք եւ պարտուեցանք, սիրեցինք եւ ատեցինք: Բռնու պայքարներով մեզի ճամբայ բացինք. գիտութեան եւ հաւատքի ջահերն երբեք մեր ձեռքերէն վար չըրինք, բարձր բռնած՝ անցանք աշխարհի չար ու բարի ափերէն: Ոչ հիները դադար ունեցան, ոչ նորերը վարդերը բարձր ըրին, ու կարծես թէ տառապանքն եղաւ մեր զոյլութեան վահանը:

Ո՞ր աղցն այսքան հեղեղային կեանք ունեցաւ, ո՞ր պատմութիւնը սեւ ու ճերմակ չարձանազրեց. եթէ տակաւին մեր բախտը սեւ է, մեր ճակատագիրը ոսկի տառեր չունի, մենք պատրաստ ենք դարձեալ պայքարի մտնել, կանգնել ճակատին վրայ՝ Վարդանի վահանը մեր թեւին:

Կեանքը քաղցր է ամէն անհատի, աւելի քաղցր է կեանքը ազգերուն համար. ապրիլ, ապրիլ, ապրիլ եւ արդարօրէն վայելել մեր արեգակը, մեր հողն եւ անունը:

Ամէն նորարաց տարուան սեմին կարծես թէ աներեւոյթ շանթ մը կ'ընէ երկնքէն

մեր հոգիները վառելու. յոյսն, սպիտակ հանգերձներով թաղուհի մը, մեր առջև էին կը քալէ. հաւատքն հրեղէն խաչ կը դառնայ, եւ սէրը ոսկեղէն շղթայ մը կը ձգէ Հայութենէ Հայութիւն: Ո՛չ յուսալքուիլ, ո՛չ ընկրկիլ. այս եղած է անթըւական ժամանակներէ մեր ցեղին բնաբանը: Սար ու հովիտ թշնամիներէն պատուած, մենք քարայրներու մէջ մատենաներ գրեցինք: Դուրսը հուր եւ սուր, մենք գերեզմանները խրամատ ըրինք: Եկան փոթորիկներ, ցնցեցին նոյն իսկ Արարատները, մենք քար քարի վրայ գրինք եւ կոթողներ կանգնեցինք: Այս հոգեկան ոյժը շատ քիչ ցեղերու տրուած է, եւ կարելի է ըսել՝ թէ մեր մենաշնորհն է:

Պատերազմներ եկան եւ անցան. առատօրէն մեր արիւնն ալ տուինք, բայց մեր հոգին պահեցինք. ո՛չ թնդանթի յաղթանակներ տօնեցինք, ո՛չ մարտիկի շքանշաններ կախեցինք մեր կուրծքերէն. բայց քիչ եղաւ մեր ցնծութիւնը երբ Ս. Մեսրոպի մը ճառագայթը տեսանք մեր երկնքին մէջ, երբ Սայեաթ-Նովայի մը արքայական Քամանշան մեր մտքին փառքերը երդեց:

Անշուշտ քաղաքական գետնի վրայ չենք խօսիր. մենք մեր սրտին հետ կը խօսինք. մեր հոգեկան վառարանին՝ ամէն նոր տարի՝ հաւատքի ճառագայթներ կը դնենք, նոր բոց եւ լոյս ունենալու համար: Բաւ է որ մեր սրտերուն աղութները վառ մընան, բաւ է որ մեր գրիչները երկաթէ ըլլան եւ մեր մտքերն արծուային թռիչք ունենան:

Երբ Ս. Ղազարի ճեմարանի դահլիճէն ներս կը մտնեմ, սեղաններու, դարակներու վրայ շարուած են լրագիրներ, պարբերականներ, գրքեր, թուոցիկներ: Ամէն օր թղթարեր կը հասնի եւ կու գան, իրարու քով կը հանգչին երկար ճամբորդութենէ յոգնած, քիչ մը մաշած լրագիր ու պարբերական. հոն են Եւրոպան, Ասիան եւ Ամերիկաները. հոն են Հայաստանի թերթ, լրագիր ու մատեն, սրտի եւ մտքի արշաւանք մը: Ամէն մէկին իր յատուկ պատգամն ունի. Հայութեան հոգի

մար: Խոշոր սիրտ մը կը բարախէ եւ կեանք կու տայ մեր ցեղին, աննիւթ արիւն կը հոսի հոգիին մէջ մեր անմահութեան իրր կենսանիւթ:

Սակայն մեր մեծագոյն մտահոգութիւնը պէտք է ըլլայ միշտ դէպի վերելք, նորոգուիլ տարուէ տարի, երիտասարդանալ մտքով եւ նիւթով, ձեւով եւ լեզուով: Հոգ չէ թէ խեղճ թուղթի մը վրայ տպագրուած երեք-չորս սլոնակներ ըլլան. դեղեցիկ ճիւղ մ'է, փոքրիկ սիրտ մ'է որ աշխարհիս մէկ անկիւնը կը բարախէ Հայութեամբ. միայն թէ սրտով գրուին եւ ծագիկ մը դնեն մեր գրական գաւառին մէջ:

Հայը ցեղային բնազդ մ'ունի ամփոփուելու եւ խմբուելու. ինքնապաշտպանութեան հոգին դարերով չըջած է գաղութէ գաղութ: Խրիմէն Լեհաստան, Թրանսիլվանիա, Իտալիայէն Հոլանտա, Փրանսո կանգնած են աղբային տուն մը, կերտած են իրենց եկեղեցին, անոր շուքին տակ հայ շարականն ու պատարագն երգելու համար. աւա՛ղ, չունէին թերթ ու լրագիր՝ գաղութ գաղութի շղթայելու համար: Այլ ժամանակ, այլ դար եւ մտայնութիւն եկան մոռացութեան քօղը քաշելու այդ հայրենակարօտ գաղթականներու շիրիմներուն վրայ:

Ներկայիս մենք ուրիշ զօրաւոր դէնք մը ունինք՝ տպագրութիւնը, որ հայ եկեղեցիին հետ պէտք է մեր ամբողջ ըլլայ:

Ի՞նչ ժառանգութիւն ձգեցինք անցեալ մօտաւոր տարիներէն՝ մեր տպագրայ սերունդին համար: Երբ ասկէ քառասուն, յիսուն տարի յետոյ բանան լրագրի մը, պարբերականի մը հաւաքածոները, պիտի հրճուին կարգալով հայ կեանքը: Հաւատացէք, ես յաճախ կը դարձնեմ հին Մշակի, Բիւզանդիոնի, Հոփիոնի եւ այլ պարբերականներու հաւաքածոները, աւելի հետաքրքիր եւ հիւթեղ կը գտնեմ, աղբային կեանք մը կայ, հայրենիքի բոյրըն ունին, կը խօսին մեր սրտէն, կը քալեն ժամանակին հետ, իրենց ուրոյն քաղաքական եւ մտաւորական խօսքն ունին եւ գիտակից առաջնորդներ եղած են իրենց ժամանակին: Հակառակ որ ներկայ

ժամանակները լրագրական մեծ դիւրութիւններ կու տան, յարաբերութիւնները կայծակնային եղած են, մեր մամուլը պէտք ունի վերելքի. չի բաւեր օրինակել օտար թերթ կամ լրագիր, գոհանալ տեղական փոքրիկ լուրերով. խորք ունեցող յօդուածներ պէտք են, աղբային նիւթեր չօջափել, հանրութիւնն հետաքրքրող էջեր բանալ. աւելորդ է երկար նկարագրութիւն մը՝ երբ երեք հոգի սեղանի մը շուրջ կը խմեն այս կամ այն հայ գիւղին կենացը:

Երբեմնի մեր Պոլիսին վրայ հաշիւ չէ կարելի ընել. երկու լրագիրներ կը գրեն ինչ որ կարելի է. բայց ի՞նչ ըսեմ այն քաղաքին՝ ուր Դուբեանի, Մեծարենցի, Պէշիկթաշեանի լուսաւոր ստուերններ կը չըջին, Վոսիփորի ափերուն, ուր բանաստեղծներ կը գտնուին՝ որոնք բանաստեղծութիւնը տաճարի խաղ կամ հանելուկ կը կարծեն:

Հայաշատ Հայէսն ալ անբարբառ մընաց, յանցանքը մերը չէ: Սակայն մտաւոր եւ գրական եռուղեւ մը կայ Պէյրութի մէջ. թերեւս գաղթահայութեան լաւագոյն կեդրոնը, ուր կարելի է գտնել աղբային վառ հոգին, գաւառներն՝ իրենց սովորութիւններով, բարբառներով, միջնակ անգամ կուսակցական վէճերով, մրտքի եւ սրտի խառնուրդ մը՝ որ մաքրուելու պէտք ունի, սրբելու արտաքին կեդրոնը, որ խորքի հայկական մաքուր հոգին փայլի: Խոշոր առաքելութիւն մը կը ծանրանայ պարբերականներու եւ լրագիրներու ուսերուն. գալոցներու հետ թեւ թեւի տալ եւ գոտախարակել սերունդները: Ազատ եւ հիւրասէր երկիր մը, բոլորը արդէն քաղաքացի, հաւասար իրաւունքներով եւ պարտականութեամբ, ամէն յարմարութիւն ունի այդ գաղութի փոքրիկ Հայաստանի մը պատկերը տալու: Տակաւին չէ հասած երբեմնի Պոլիսի կամ Թիֆլիզի մտաւորական բարձրութեան. գրական քանակը առատ հունձքեր կու տայ, որակը պէտք ունի գեղեցկանալու եւ բարձրանալու. նիւթական միջոցները չեն որ արդելը կ'ըլլան, այլ գրական խստա-

պահանջ հոգին, մանաւանդ պարբերականներուն մէջ:

Պարսկաստանի գրական կեանքը մեկուսացած եւ խմբուած լրագրի մը շուրջ, շատ քիչ անգամ ազատ լոյսեր կու տայ: Հսկայ գաղութ է, աշխատանքի դաշտը բեղուն է, աշխատողը քիչ, ճնշուած կը տեսնուին երկրին մտայնութեան եւ չեն ձգեր իրենց ակնարկները դէպի հեռուններ՝ հաղորդուելու համար միջաղբային յառաջադէմ գրականութեան եւ աղբային կեանքին: Կարծես թէ աշխարհէ քաշուած կրօնաւորներ են, որոնք մեր գրի բաղինին խուսկ եւ մոմ կը վառեն:

Իրաքը հայկական ձայն չունի. Քուէյթը նաւթի ետեւէն է, շուրջ տասը հազար Հայերով:

Հայկական Եգիպտոսը գերբնական ջանքեր կ'ընէ գրական նաւարեկութենէ ազատելու համար: Գաղութն արդէն արիւնաքամ կ'ըլլայ, չէն Հայութիւնը կրկին գաղթականութեան ցուպն առած՝ հորիզոնէ հորիզոն կ'անցնի: Պէտք է բեկոր բեկորի մօտ բերել, գրական կեանք ստեղծել, գէթ հաստատ պահելու համար ինչ որ կայ: Մի գուցէ օր մը բուրդերը մեղի համար հեռաւոր հէքեաթներ ըլլան:

Ի՞նչ կու տայ Յունաստանը: Խանդավառ գաղութ մ'ունի, երիտասարդներ ունի՝ բաւական մշակուած, բայց լրագրի մը սահմանէն անդին չանցաւ, ոչ մէկ անուն տակաւին տուաւ մեր գրականութեան: Պէյրութի պէս՝ հոն ալ վառ է կուսակցական երջանկութիւնը:

Պէտք չկայ սաւառնակի՝ Փարիզ հասնելու համար. աշխարհիս բոլոր ճամբաները լոյսերու քաղաքը կը տանին եւ հեշտ է գտնել հայկական հոմ գաղութ մը, քաղքենի խառնուրդ մը մտքերու, բարքերու, լրագիրներու, պարբերականներու, գրքերու, հայրենակցականներու, կղերականներու եւ անթիւ միութիւններու, իրարու մօտ՝ իրարմէ անջատ, տեսակ մը հնդկական բարձր ու ցած տոհմեր (քասթա), որոնց միացած ոյժը՝ հրաշքներ պիտի գործէր մեր վայրափառին կեանքին մէջ: Ամբողջ

արտասահմանը Փարիզին կը նայի եւ փա-
րիզ յողնութեան նշաններ կու տայ: Հե-
ռացող կամ ալեղարդ գը ա գ է տ ն եր ու
տեղ՝ նորեր չեն գար: Գրական արժէքա-
ւոր դործեր լոյս չտեսան, երիտասարդ
խարխափումները չեն բաւեր: Փարիզի
մէջ կարելի է ամէն օր հողեկան սնունդ
գտնել, իւրացնել, հայացնել, որակաւոր
թերթ ու լրագիր, վէպ ու քերթուած հը-
րատարակելու համար: Նուազ կուսակ-
ցութիւն, աւելի միացած դործունէու-
թիւն: Համայնակուլ ժամանակը մեղի չի
սպասեր, կ'առնէ կը տանի մեր սրտին
ծաղիկները: Փառք են մեղի արժէքաւոր
արուեստագէտներու անունները. ես չեմ
պարծենար օտար լեզուով գրուած եւ
համբաւի արժանացած վէպերով կամ քեր-
թուածներով: Լաւ է մէկ ծաղիկ տնկել
մեր պարտէզին մէջ, քան դունագեղ վար-
դեր հասցնել ուրիշի այգիին մէջ:

Միացեալ Նահանգներու մեր գրական
կեանքը հին Անջատողականներուն օրերը
կ'ապրի: Դէմ դիմաց կուսակցութիւններ,
հող կը բաժնեն, սահմաններ կը դնեն ա-
ռանց հողի եւ սահմանի: Իրենց թերթերն
սպառնցան յուշեր գրելով, լրագիրները՝
տաշնդի պէս թուղթերու վրայ տպագրու-
ած, պաղ դէմքեր ունին, կը պակսի
հայկական տաք հողին, քիչ կը հետաքրք-
րուին այլ գաղութներով, շատ կը վիճեն
հող բաժնելու համար: Ոչ մէկ որակաւոր
գրողէտ տուն. Սարոյեանը մերն է եւ
մերը չէ: Միթէ ամերիկեան մթնոլորտն
է որ գործի հայեր չինեց եւ ոչ մտքի: Չեմ
խորհիր թէ հոն ալ մեր մամուլը նպաստ-
ներով ապրի եւ աղքատութեամբ քարշ
տայ իր կեանքին: Մօտենալ մեր ազգային
կեանքին՝ վէպերով, քերթուածներով,
հրամցնել հասարակութեան ազգային հիւ-
թեղ սնունդ, որ չփնտռէ օտար գիրք, օ-
տար հողի:

Արժանիքին մէջ կայծ մը կայ. փոքրիկ
բոյն մը՝ գրական կեանքի, հող չէ թող
սոխակի բոյն ըլլայ, եւ ոչ արծիւի: Հա-
րուստ գաղութ մ'է, շատ քիչ մտաւորա-
կաններով. քանի մը երիտասարդներ, լը-
րագրի մը շուրջ, իրենց ձայնը կը հասցը-

նեն գաղութէ գաղութ. կը վախեմ թէ օր
մը այդ ձայնն ալ մարի՝ եթէ տեղական
Հայութիւնը խանդավառ հետաքրքրու-
թիւն չունենայ: Դրամով աղղութիւն չի՝
պահուիր, միտքն ու գրիչն է ցեղերուն
պահակը: Հին գաղութները գէթ եկեղե-
ցի եւ առանձին գերեզման ունէին. իրենց
սիրելիներուն անունները հայերէն տառե-
րով գրած են եւ դարերը չեն կրցած մա-
շցնել, նոր գաղութները վաղը գերեզ-
ման ալ պիտի չունենան՝ պատմութեան
անուն մ'իսկ տալու:

Ներկայ միջազգային կացութիւնը մեղ
երկու ամբերու վրայ բաժնած է. մէկ աղղ՝
երկու աշխարհներ, մէկ պատմութիւն եւ
լեզու՝ երկու գրական մտայնութիւն:

Եթէ կշիռքի թաթերուն վրայ դնենք
Հայաստանի եւ արտասահմանեան գրա-
կան արտագրութիւնները, մենք փետուրի
պէս երկինք կը նետուինք, իբր գիրք եւ
պարբերական. թերեւս լրագրութեամբ ա-
ւելի գերազանց ըլլանք. մեղի ծանօթ չեն
երկրորդական քաղաքներու, կամ հեռա-
ւոր Մոսկուայի, Պաքուի կամ Ախալքա-
լաքի մէջ հրատարակուած մեծ ու փոքրիկ
օրաթերթերը:

Հայաստանի մամուլն ալ ունի իր մեղ-
քերն ու առաքինութիւնները.

Նախ որ կը գործածեն վատ թուղթ եւ
դէշ տպագրութիւն, անընթեռնիլ եւ յող-
նեցուցիչ:

Յետոյ որ յամառօրէն կը շարունակեն
բարբարոս ուղղագրութիւնը:

Հուսկ որ խորթ եւ օտար բառերով կ'աղ-
ծատեն մեր գեղեցիկ լեզուն:

Ես չեմ խօսիր բանասիրական, գիտա-
կան արտագրութիւններու մասին, որոնք
խակապէս արժէքաւոր են: Միջազգային
համբաւի արժանի գիտնականներ կան ա-
մէն մարդի մէջ, եւ ասիկա պատիւ է մեր
ազգին: Ծեմարանն (Ակադեմիա) ու գի-
տական հաստատութիւնները կը գործեն
եւ հակադրաբար առաջ կ'երթան. վաղը գի-
տութիւնը կը մնայ, բայց ոչ ուղղագրու-
թիւնը: Բնութիւնն ոստումներ եւ արտա-
ոցութիւններ չի սիրեր:

Խորհրդային սահմաններուն մէջ մեր

գրականութիւնն ամփոփուած է Երեւանի
մէջ: Թիֆլիզ, Պաքու, Մոսկուա իրենց
հոծ հայութեամբ՝ մտաւորական ոչ մէկ
արտագրութիւն ունին: Աւելի ամուլ են
քան արտասահմանի հայաբնակ քաղաք-
ները:

Հոն ամէն բան Երեւանն է, տպագրու-
թիւն, գիրք, մտաւորական, արուեստա-
դէտ, ընթերցող, օտարական, գրատուն
կեդրոնացած են մայրաքաղաքին մէջ:
Չեմ հանդիպած գիրքի մը՝ որ Լենինա-
կան կամ Կիրովական տպագրուած ըլլայ:

Ի՞նչ գրական արտագրութիւն ունեցաւ
այս վերջին երկու երեք տարիներուն,
այնքան բաղմաթիւ գրողներով լի քաղա-
քը: Կարծես նոր եռանդ մը մղում կու տայ
հին եւ նոր հեղինակներու ամբողջական
գործերը վերհրատարակելու: Լաւ բան է,
գիւրամատչելի կը դառնան, բայց չեն
կազմեր նոր հունձք: Այն աղղը որ ամէն
տարի գրական նորութիւն չի բերեր, տեղ-
քայլ կ'ընէ: Երեւանը կարող է իր գրա-
դէտներով լեցնել արտասահմանի վիպա-
կան, բանաստեղծական պակասը: Սպասե-
ցինք Շիրազի նոր գործերուն, Մահարին
լուռ է, Տարօնացին, Դաշտենց թերեւս
նոր երկունքի մէջ են. Պարոյր Սեւակը
չեղեց իր Անլուի Զանգակատան ուղին,
վախեմ թէ գայթի: Ո՞ւր են Վ. Անանեանի
այնքան ազգարոյր եւ հաճելի պատմը-
ւածքները: Սերոյ Խանդատեան յողնած
պէտք է ըլլայ իր գրեթէ հազար էջեան վէ-
պով: Սիրվա Կապուտիկեանի յուշերը իր
համբաւը չեն բարձրացներ. լաւ է իր քեր-
թողական հունին մէջ մտնէ:

Տակաւին կան երիտասարդ անուններ եւ
ոյժեր, որոնք անշուշտ ժամանակով պի-

տի գտուն, տաղանդաւորը փայլ պիտի
առնէ, անտաղանդը պիտի մարի: Հայ Ժո-
ղովուրդը խորքով բանաստեղծ է, Հա-
յաստանի հողը տաքութիւն կու տայ սըր-
տերուն, միայն ազատ թռիչք պէտք է՝
մեր կապոյտ երկնքին մէջ: Ու կը սպա-
սենք որ տաղանդաւոր գրողներ՝ Ապրի-
լեան Նահատակներու յիսնամեակին առ-
թիւ՝ նոր գափնիներ դնեն անոնց անծա-
նօթ շիրիմներուն վրայ:

Թէպէտ դանդաղ, բայց յարատեւ ճիգ
մը կայ մեր կրօնական կեդրոններուն մէջ:
Վենետիկ, Վիեննա աշխատանքի լայն
դաշտեր ունին, քիչ մշակներ: Էջմիածինը
պարբերականի մը ապաւինած, Խրիմեան
Հայրիկի մտաւորական օրերը կ'ապրի:
Երուսաղէմ եւ Անթիլիաս երկունքի մէջ
կ'երեւին: Հասկ եւ Սիոն ճիգեր կը թափեն
գրական ու բանասիրական դաշտին վրայ:

Հակառակ այս ջղադրելու դարուն, ուր
բովանդակ աշխարհս կ'այեկոծի, անձկու-
թեամբ փնտռելով խաղաղութիւն եւ եղ-
բայրութիւն, անշուշտ երկու ամբերուն
վրայ Հայութիւնն ալ կը տարուբերի իր
հողերով, առօրեայ կեանքով, երազներով
եւ յոյսերով: Պէտք է ամէն ամի իրարու
ձեռք երկարենք, մէկ սեղանի շուրջ բաղ-
մինք, մէկ բաժակով խմենք Հայութիւն:

Ամէն քաղաքական հաշիւներէ, տարադ-
ներէ եւ տեղական պայմաններէ վեր է մեր
պաշտամունքը հայրենի գրականութեան:
Վստահ ենք թէ նոր տարին հին արմատէն
նոր եւ ծաղկալից ծիւեր պիտի տայ հա-
ւասարապէս երկու ամբերուն վրայ:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ